

**ՄԻՋՏԵՔՍԱՑԻՆ ՏԱՐԻԵՐԸ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՍԿԱՑԱԿԱՆ-ԼԵԶԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ
ՊԱՏԿԵՐՈՒՄ (Ս. ՄՈՆԵՄԻ «ԱՏՐԿՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ» ԵՎ
«ԱՄՓՈՓԵԼՈՎ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ» ՎԵՊԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ԱՆԱՀԻՏ ՄԱԿԱՐՅԱՆ

Հոդվածի նպատակն է դիտարկել ինքնամիջտեքստայնությունը՝ որպես հեղինակի անհատական ոճի ձևավորման միջոց: Ս. Մոնեմի «Ստրկություն մարդկային» վեպում և «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպում առկա ինքնամիջտեքստային տարրերի վերհանումը թույլ է տալիս բացահայտել «ազատություն» հասկացության հեղինակային հայեցակերպը: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ «ազատություն» հասկացությամբ ինչպես մետատեքստում, այնպես էլ անդրադարձնող տեքստում զուգորդվում է «կամքի», «ճակատագրի» և «երջանկության» հետ, ինչն առկայացված է լեզվական տարբեր ցուցիչներով:

Բանալի բառեր - ներտեքստայնություն, միջտեքստային հարաբերություններ, մետատեքստ, անդրադարձնող տեքստ, լեզվական ցուցիչներ:

1967թ. Յ. Կրիստևայի կողմից առաջարկված «միջտեքստայնություն» եզրի երևան գալուց հետո լեզվաբանության մեջ սկսվեց շրջանառվել նաև «ինքնամիջտեքստայնություն» (автоинтертекстуальность) եզրը, ինչը որոշ լեզվաբանների կողմից (Լ. Դելլենբախ, Ս. Հոլտուիս, Ն. Ֆատենա) դիտարկվեց որպես միջտեքստայնության տարատեսակ: Միջտեքստայնության համաբանությամբ ռուս լեզվաբան Ն. Ֆատենան ինքնամիջտեքստայնությունը դիտարկում է որպես միևնույն հեղինակի տարբեր ստեղծագործություններում առկա միջտեքստային հարաբերությունների ամբողջություն, ինչը նպաստում է հեղինակի անհատական ոճի ձևավորմանը¹: Ինչպես արդարացիորեն նշում է Ն. Ֆատենան. «...հեղինակի ցանկացած տեքստ կառուցվում է տվյալ հեղինակի լեզվական համակարգին հատուկ անփոփոխականների միջոցով»²: Մեկ այլ ռուս լեզվաբան՝ Վ. Չերնյավսկայան, հավելում է, որ «...ինքնամիջտեքստայնությունը, թեմատիկ պրոգրեսիայի սկզբունքի

¹ **Фатеева Н. С.** (2007), Интертекст в мире текстов: Контрапункт интертекстуальности, Москва, с. 91.

(Fateeva N. S. (2007), Intertekst v mire tekstov: Kontrapunkt intertekstualnosti, Moskva, s. 91)

² Նույն տեղում, էջ 92:

համաձայն, միավորում է տվյալ ստեղծագործողի երբևէ առաջ քաշած մտքերը և համախմբում է նրա կողմից ստեղծված բոլոր տեքստերը մեկ միասնական մակրոհամակարգի մեջ»³: Հետևաբար՝ ինքնամիջտեքստայնությունը կարելի է բնութագրել որպես մի յուրատեսակ «բանալի», ինչը թույլ է տալիս ներթափանցել հեղինակի ստեղծագործական աշխարհ՝ բացահայտելով նրա աշխարհընկալումը, աշխարհայացքը, ինչպես նաև լեզվաշխարհը:

Այնուամենայնիվ, ինքնամիջտեքստայնության խնդրին անդրադառնալիս անհրաժեշտ է կարևորել նաև ընթերցողի գործոնը, ինչն առանցքային դեր է կատարում հեղինակի անհատական ոճի վերհանման գործընթացում: Գեղարվեստական երկը, լինելով հեղինակի իմացական և հուզական աշխարհի արտացոլում, յուրացվում է ընթերցողի գիտակցության մեջ որոշակի միջոցներով՝ լեզվական, արտալեզվական, մշակութային ևն: Ինչպես վկայում է Ե. Լյուբավինան. «...ներտեքստայնությունը օգնում է ընթերցողին ներթափանցել հեղինակի անհատական, հոգեբանական և գեղարվեստական աշխարհ՝ ծանոթանալով գրողի ինքնաճանաչմանը և ինքնագնահատականին»⁴:

Ա. Ֆիլիպովան դիտարկում է ինքնամիջտեքստայնությունը՝ որպես հեղինակի հասկացական-խոսքային համակարգի առանցքային մաս, ինչն իր արտացոլումն է գտնում հեղինակի տեքստային համակարգում բազմազան լեզվական ցուցիչների օգնությամբ: Հարկ է նկատել, որ ինքնամիջտեքստային ցուցիչները, որոնք կարող են արտահայտված լինել տարբեր լեզվական միջոցներով, բացահայտում են ոչ միայն միևնույն հեղինակի՝ տարբեր ժամանակաշրջաններում գրված ստեղծագործությունների (ինչպես գեղարվեստական, այնպես էլ ոչ գեղարվեստական՝ ինքնակենսագրական գրքեր, էսսեներ, նամակներ ևն) կապը տեքստային մակարդակում, այլև ծառայում են հեղինակային «ես»ի վերհանմանը:

Հոդվածը նպատակ ունի դիտարկելու ինքնամիջտեքստայնությունը՝ որպես հեղինակի անհատական ոճի ձևավորման միջոց: Այսպիսով, ինքնա-

³ Чернявская В. Е. (2009), Лингвистика текста: Поликодовость, интертекстуальность, интердискурсивность, Москва, с. 192.
(Chernyavskaya V. E. (2009), Lingvistika teksta: Polikodovost, intertekstualnost, interdiskursivnost, Moskva, s. 192).

⁴ Любавина Е. В. (2008), Интертекстуальность как интерпретационная стратегия: Интерпретация текста: ментальное зеркало видения, Екатеринбург, с. 155
(Lubawina E. V. (2008), Intertekstualnost kak interpretatsionnaya strategiya: Interpretatsiya teksta: mentalnoe zerkalo wideniya, Yekatiriburg, s. 155).

միջտեքստային տարբեր տարրերի վերլուծության միջոցով կփորձենք բացահայտել «ազատություն» հասկացության հեղինակային ընկալումը՝ հիմք ընդունելով Ս. Մոեմի «Սպրկություն մարդկային» վեպը և «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպը: Մեր ուսումնասիրության առանցքն է կազմում «ազատություն» հեղինակային հասկացությունը, ինչն էլ միավորում է այս երկու ստեղծագործությունները՝ նպատակ ունենալով վեր հանելու «ազատություն» հասկացության մոեմյան ընկալումն ու մեկնաբանումը:

Ս. Մոեմն այն աշխարհահռչակ ստեղծագործողներից մեկն է, ով հայտնի է ինչպես իր գեղարվեստական, այնպես էլ ոչ գեղարվեստական ստեղծագործություններով: Ս. Մոեմին բնորոշ են վերլուծական դատողությունը, մտածողությունը, ինչը հատկապես իր վառ արտահայտությունն է գտել նրա ոչ գեղարվեստական ստեղծագործություններում, որտեղ գետեղված ինքնամեկնաբանությունները Ս. Մոեմի գեղարվեստական համակարգում կարելի է դիտարկել որպես ինքնամիջտեքստայնության ձևերից մեկը: Պատահական չէ մեր կողմից «Սպրկություն մարդկային» և «Ամփոփելով անցած ուղին» ստեղծագործությունների ընտրությունը, քանի որ դրանցից առաջինը, լինելով գեղարվեստական ստեղծագործություն, իսկ երկրորդը՝ ինքնակենսագրական վեպ, միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են: «Սպրկություն մարդկային» վեպը, որը գրվել է 1915 թվականին, պարունակում է ինքնակենսագրական տարրեր և, այսպիսով, հանդես է գալիս որպես մետատեքստ «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպի համար, որը լույս է տեսել ավելի քան 23 տարի անց՝ 1938-ին: Իրականության, աշխարհի մասին սեփական մտքերը, գաղափարները ոչ միջնորդավորված, այսինքն՝ ոչ թե կերպարների միջոցով, այլ անձամբ ընթերցողին փոխանցելու ցանկությունը մղեցին Մոեմին 64 տարեկանում գրելու «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպը, որտեղ նա հաճախ անդրադառնում է այն թեմաներին և գաղափարներին, որոնք արձարծել է «Սպրկություն մարդկային» վեպում: Դրանցից մեկն «ազատության» գաղափարն է, որը Մոեմը զուգորդում է *կամքի, ճակատագրի և երջանկության հետ*:

Ստորև ներկայացված հատվածներում, որոնք վերցված են վերոնշյալ ստեղծագործություններից, ակնհայտ երևում են ինքնամիջտեքստային տարրերը՝ արտահայտված տարբեր լեզվական ցուցիչներով:

‘The illusion which man has that his will is free is so deeply rooted that I am ready to accept it. I act as though I were a free agent. But when an action is

performed it is clear that all the forces of the universe from all eternity conspired to cause it, and nothing I could do could have prevented it⁵.

I wanted to get what knowledge I could about the general structure of the universe; I wanted to make up my mind whether I had to consider only this life or a life to come; I wanted to discover whether I was a free agent or whether my feeling that I could mould myself according to my will was an illusion; I wanted to know whether life had any meaning or whether it was I that must strive it one⁶.

Ակնհայտ է, որ ներկայացված երկու տեքստերում էլ՝ թե՛ անդրադարձվող և թե՛ անդրադարձնող, «ազատության» գաղափարը զուգորդվում է ազատ կամքի հետ, ինչպես նաև ակնառու են հեղինակի մտորումներն ազատ ընտրության հնարավորության բացակայության վերաբերյալ, ինչը ներկայացված է հետևյալ լեզվական ցուցիչներով՝ “*will is free*”, “*free agent*”, “*illusion*”: Հետաքրքրական է “*free agent*” դարձվածային միավորի օգտագործումը, որը մինևույն իմաստն է կրում երկու համատեքստերում էլ: Եթե առաջին օրինակում «Ստրկություն մարդկային» վեպի հերոսը համոզված է իր կամքի ազատության բացակայության հարցում՝ պնդելով, որ կամքի ազատությունը զուտ խաբեանք է՝ “*The illusion which man has that his will is free is so deeply rooted that I am ready to accept it*”, ապա ինքնակենսագրական վեպում Մոեմը մտորումների, երկմտանքի մեջ է և փորձում է գտնել այդ նույն հարցի պատասխանը՝ “*I wanted to discover whether my feeling that I could mould myself according to my will was an illusion*”:

Դիտարկենք նաև հաջորդ օրինակը, որտեղ ներտեքստային տարրեր ցուցիչների միջոցով ակնառու է Մոեմի՝ ազատությունը ճակատագրի հետ զուգորդելը:

But when an action is performed it is clear that all the forces of the universe from all eternity conspired to cause it, and nothing I could do could have prevented it. It was inevitable⁷.

I was glad to learn that the mind of man (himself the product of natural causes) was a function of the brain subject like the rest of his body to the laws of cause and effect, and that these laws were the same as those that governed the

⁵ Maugham W. Somerset, Of Human Bondage, available online at: <http://www.planetpdf.com>, p. 418.

⁶ Maugham W. Somerset (1978), The Summing up, London, p.162.

⁷ Նույն տեղում, էջ 418:

movements of star and atom. I exulted at the thought that the universe was no more than a vast machine in which every event was determined by a preceding event so that nothing could be other than it was⁸.

Մեջբերված երկու հատվածներում էլ կարելի է նկատել Մոեմի միտումը, այն է՝ մարդու գործողությունները ներկայացնել որպես ճակատագրի կողմից թելադրված արարքներ՝ անուղղակիորեն հերքելով վերջինիս կամքի ազատության հնարավորությունը: «Ստրկություն մարդկային» ստեղծագործության մեջ Մոեմը ճակատագիրն առկայացնում է *“forces of the universe”* բառակապակցության միջոցով: Միևնույն միտքը ներկայացված է «Ամփոփելով անցած ուղին» ստեղծագործության մեջ փոփոխված, այլ լեզվական միջոցներով՝ սակայն պահպանելով նույն իմաստը: Այսպես համեմատենք.

“forces of the universe” - “natural causes”

“these laws were the same as those that governed the movements of star and atom”

Հասկանալի է, որ վերջին ասույթում հեղինակը ներակայորեն արտահայտում է տիեզերքի գաղափարը, ինչը նա համարում է ճակատագրի շարժիչ ուժը:

Հարկ է նկատել, որ *“forces of the universe”* բառակապակցությունը ներտեքստային բնույթ է կրում, քանի որ այն մի քանի անգամ կրկնվում է մետատեքստում, որն էլ հետագայում որպես ինքնանդրադարձ դրսևորվել է ընդունող, անդրադարձնող տեքստում:

Ներկայացնենք հաջորդ օրինակը.

It looked as though men were puppets in the hands of an unknown force, which drove them to do this and that...⁹

I believed that we were wretched puppets at the mercy of a ruthless fate; and that, bound by the inexorable laws of nature, we were doomed to take part in the ceaseless struggle for existence with nothing to look forward to but inevitable defeat¹⁰.

Վերը բերված հատվածների քննությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ իսկապես Մոեմի կյանքում ճակատագիրն իր ուրույն տեղն է զբաղեցրել: «Ստրկություն մարդկային» վեպի հրապարակումից ավելի քան 23

⁸ Նույն տեղում, էջ 50:

⁹ Նույն տեղում, էջ 992:

¹⁰ Նույն տեղում, էջ 51:

տարի անց Մոեմը վերադառնում է իր այն մտքին, որ «մարդիկ խղճուկ կամակատարներ են ճակատագրի ձեռքերում»: Հմմտ.

“It looked as though men were puppets in the hands of an unknown force”

“I believed that we were wretched puppets at the mercy of a ruthless fate”

Հետաքրքրական է, որ անդրադարձնող տեքստում Մոեմը *“unknown force”* բառակապակցության փոխարեն օգտագործում է *“fate”* բառը, ինչի միջոցով հեղինակն ավելի որոշակիացնում է իր միտքը՝ ընթերցողին հնարավորություն տալով բացահայտելու մետատեքստում օգտագործված *“forces of the universe”, “unknown force”* բառակապակցությունների բուն էությունը, որոնք ներակայորեն արտացոլում են «ճակատագրի» գաղափարը: Հատկանշական է, որ մարդու կամքի ազատության բացակայության գաղափարի առանցքը երկու հատվածներում էլ *“puppet-կամակալար”* բառն է, որը, երկու տարբեր համատեքստերում կապակցված լինելով այլ բառերի հետ, պահպանում է իր հիմնական իմաստը: Տարբերությունն այն է, որ երկրորդ հատվածում, այսինքն՝ անդրադարձնող տեքստում՝ *“I believed that we were wretched puppets at the mercy of a ruthless fate”* ասույթը խոսքին հաղորդում է ավելի շատ հուզարտահայտչականություն՝ սաստկացնելով վերջինիս բացասական գնահատողական երանգը: Դրան են նպաստում *“wretched”, “at the mercy of”, “ruthless”* բառերն ու արտահայտությունները:

Հետաքրքրական է նաև *“drove”* և *“bound”* բայերի օգտագործումը հեղինակի կողմից, քանի որ դրանք երկուսն էլ կրում են *«ստիպողաբար ինչ-որ գործողության դրդելու, ազատության սահմանափակման»* իմաստը: Փաստորեն Մոեմը տարբեր տեքստերում վերոնշյալ հարիմաստ բայերի օգտագործմամբ միտված է արտահայտելու ճակատագրի դիմաց մարդու անզորության գաղափարը:

Ինչպես «Ստրկություն մարդկային» վեպում, այնպես էլ «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպում Մոեմը մտորում է ոչ միայն ազատության և ճակատագրի կապի շուրջ, այլև փորձում է բացահայտել նաև երջանկության և ազատության կապը:

Ներկայացնենք հետևյալ օրինակները.

He adored the life of the German university with its happy freedom and its jolly companionships¹¹.

But when I came back from Germany ... I had been happier than ever

¹¹ Նույն տեղում, էջ 183:

before. I had for the first time tasted freedom, and I could not bear the thought of going to Cambridge and being subjected once more to restraint’¹².

Մեջբերված օրինակներում ինքնամիջտեքստային տարրերն առկա են ոչ միայն լեզվական մակարդակում, այլև արտալեզվական, քանի որ «Ստրկություն մարդկային» վեպը նույնպես հիմնված է Մոեմի ինքնակենսագրական փաստերի վրա, հետևաբար՝ թե՛ Ֆիլիպի և թե՛ Մոեմի համար Գերմանիան զուգորդվում է ազատության ձեռքբերման հետ, մինչդեռ Անգլիան զուգորդվում է ազատության բացակայության հետ: Ֆիլիպի ազատության բերկրանքը Գերմանիայում առկայացված է վեպում *“happy freedom”* մակդրային բառակապակցության միջոցով, ինչն անդրադարձնող տեքստում արտահայտված է փոփոխված շարահյուսական կառուցվածքով՝ սակայն պահպանելով նույն բառային գործածությունը: Հմմտ.

“happy freedom” - I had been happier than ever before.

I had for the first time tasted freedom

Հատկանշական է, որ Մոեմն Անգլիան համարում է սահմանափակումների երկիր, ինչի ապացույցն է միևնույն մտքի կրկնությունը երկու վեպերում էլ: Այսպես.

he had looked upon England as a place of exile...

*But in England you get neither: you’re ground down by convention. You can’t think as you like and you can’t act as you like*¹³.

*To me England has been a country where I had obligations that I did not want to fulfill and responsibilities that irked me. I have never felt entirely myself till I had put at least the Channel between my native country and me*¹⁴.

«Ստրկություն մարդկային» վեպում Մոեմն Անգլիան պատկերում է որպես պայմանականությունների, սահմանափակումների երկիր, նույնիսկ այն համարում է արքորավայր՝ *“England as a place of exile”*, *“in England...: you’re ground down by convention”*: Մինչդեռ «Ամփոփելով անցած ուղին» ստեղծագործության մեջ այդ նույն սահմանափակումները, ազատության բացակայությունը Մոեմը ներկայացնում է *“obligations”*, *“responsibilities”* բառերի միջոցով, ինչպես նաև *“I have never felt entirely myself”* ասույթի կիրառմամբ: Այսպիսով, վերոնշյալ ինքնամիջտեքստային տարրերն ուղղորդում են ընթերցողին

¹² Նույն տեղում, էջ 43:

¹³ Նույն տեղում, էջ 185:

¹⁴ Նույն տեղում, էջ 66:

բացահայտելու Մոեմի վերաբերմունքն Անգլիայի հանդեպ: Հարկ է նկատել, որ գեղարվեստական վեպում Մոեմը, օգտագործելով *“exile”* բառը, ինչպես նաև *“to be ground down by convention”* արտահայտությունը, հավելյալ գնահատողական երանգ է հաղորդում հերոսի խոսքին, մինչդեռ ինքնակենսագրական վեպը տարբերվում է ոճական հնարների սակավությամբ:

Այսպիսով, Ս. Մոեմի «Ստրկություն մարդկային» և «Ամփոփելով անցած ուղին» երկերի լեզվաոճական քննության արդյունքներն ամփոփելով՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ ինքնամիջտեքստայնությունը կարելի է դիտարկել որպես հեղինակի անհատական ոճի բացահայտման միջոց: Վերոնշյալ ստեղծագործություններում առկա ինքնամիջտեքստային տարբեր տարրերի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում վեր հանելու «ազատություն» հասկացության մոեմյան ընկալումն ու մեկնաբանումը: Ուսումնասիրությունները վկայում են, որ Ս. Մոեմը թե՛ «Ստրկություն մարդկային» վեպում և թե՛ «Ամփոփելով անցած ուղին» ինքնակենսագրական վեպում «ազատություն» հասկացությամբ զուգորդում է կամքի, ճակատագրի և երջանկության հետ, ինչն առկայացվում է անդրադարձնող տեքստում լեզվական տարբեր ցուցիչներով:

АВТОИНТЕРТЕКСТУАЛЬНЫЕ РЕПРЕЗЕНТАНТЫ КОНЦЕПТУАЛЬНО-ЯЗЫКОВОЙ КАРТИНЫ МИРА ПИСАТЕЛЯ (НА МАТЕРИАЛЕ РОМАНА С. МОЭМА “ВРЕМЯ СТРАСТЕЙ ЧЕЛОВЕЧЕСКИХ” И АВТОБИОГРАФИЧЕСКОГО РОМАНА “ПОДВОДЯ ИТОГИ”)

АНАИТ МАКАРЯН

Целью данной работы является рассмотрение понятия “автоинтертекстуальность” как средства формирования идиостиля писателя. Анализ автоинтертекстуальных репрезентантов в романе С. Моэма “Время страстей человеческих” и автобиографического романа “Подводя итоги” позволяет выявить индивидуально-авторское восприятие концепта “свобода”. Результаты исследования показывают, что автор ассоциирует концепт “свободу” с “волей”, “судьбой” и “счастьем” как в метатексте, так и в посттексте с помощью разных языковых маркеров.

Ключевые слова - автоинтертекстуальность, межтекстовые отношения, метатекст, посттекст, языковые маркеры

**AUTOINTERTEXTUAL MARKERS IN THE CONCEPTUAL AND LINGUISTIC
PICTURE OF THE AUTHOR'S WORLD (BASED ON "OF HUMAN BONDAGE"
AND "THE SUMMING UP" BY S. MAUGHAM)**

ANAHIT MAKARYAN

The present paper studies autointertextuality as a means of structuring the author's individual style. The analysis of the autointertextual markers in the novel "Of Human Bondage" and the autobiographical novel "The Summing Up" by S. Maugham discloses the author's individual perception and interpretation of the concept "freedom". The study in question has yielded some interesting conclusions: the writer associates the concept "freedom" with "will", "fate" and "happiness" both in the metatext and in the allusive text by means of various language markers.

Key words - autointertextuality, intertextual relations, metatext, allusive text, language markers.